Արձանագրություն N 2

Դեղի (տուբերկուլին) ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2024/66» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ — Հարություն Արոյան

Հանձնաժողովի անդամներ — Ռուզաննա Դոխոյան, Լիլիթ Սարաոնկյան

Հանձնաժողովի քարտուղար — Արմինե Գալուստյան

## 1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

---

(Հ. Արոյան)

Ընդունել ի գիտություն, որ 10.07.2024թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2024 թվականի հուլիսի 17-ին, ժամը 12:00-ն: 2024 թվականի հուլիսի 17-ին ժամը 12:00-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Կազմակերպության հասցե, հեռախոս, էլ. հասցե | Կազմակերպության ՀՎՀՀ |
|---|---|---|---|
| 1 | «Իվաֆարմ» ՍՊԸ | ք. Երևան, Տերյան 92/3, 098 44 88 56, ivapharm89@gmail.com | 08625799 |
| 2 | «ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | ք. Երևան, Աբովյան փ. 23, 094 27 74 00, arg.aj@mail.ru | 02823566 |

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

## 2. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

---

(Հ. Արոյան)

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

## 3. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հայտերի կազմման և ներկայացման, փաստաթղթերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին,

---

(Հ. Արոյան)

3.1 Հանձնաժողովը գնահատման ընթացքում արձանագրել է, որ «Իվաֆարմ» ՍՊԸ ընկերության կողմից ներկայացված հայտի Հավելված 1-ով իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը սխալ է, անհրաժեշտ է շտկել և նել 2024թ հաստատված հայտարարագրի կայքէջի հղումը,

3.2 «ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության կողմից հայտով Հավելված 1.1-ը թերի է ներկայացված, ապրանքի ամբողջական նկարագրում նշված չէ ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

**22.07.2024թ.**

**Հանձնաժողովը որոշեց՝**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով՝ կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով և ծանուցել մասնակիցներին՝ շտկելու արձանագրված անհամապատասխանությունները:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

***Ընդունել ի գիտություն՝***

Հանձնաժողովի կողմից ամբողջական գնահատման արդյունքում արձանագրվել է, որ «Իվաֆարմ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտում անհամապատասխանություն առկա չէ, ս.թ. հուլիսի 22-ին հանձնաժողովի որոշումը պայմանավորված է եղել տեխնիկական խնդիրներով:

«ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՑ ՋԵՑ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### 4. Մասնակիցների առաջարկած գների մասին

---

***(Հ. Առոյան)***

Ստորև ներկայացվում են մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները

| Հ/հ | գնման առարկայի անվանումը | Քանակը | նախահաշվային գին | | մասնակիցների անվանումը | մասնակիցների գնային առաջարկները | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Միավորի գին | Ընդհանուր արժեքը | | առանց ԱԱՀ | ԱԱՀ | ընդհանուր | Միավորի գինը |
| 1 | Տուբերկուլին /մաքրված, ստանդարտ նոսրացմամբ, լուծույթ ներարկման | 45000 Դոզա | 272,8 | 12 276 000 | «Իվաֆարմ» ՍՊԸ | 20 500 000 | - | 20 500 000 | 455,55 |
| | | | | | «ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՑ ՋԵՑ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 22 455 000 | - | 22 455 000 | 499 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### 7. Ընթացակարգի ամփոփման մասին

---

***(Հ. Առոյան)***

31.07.2024թ.

***Հանձնաժողովը որոշեց՝***

Ղեկավարվելով Կարգի 42-րդ կետով՝ «ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՑ ՋԵՑ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության հայտը գնահատել անբավարար և մերժել, ինչպես նաև մերժել «Իվաֆարմ» ՍՊԸ-ի հայտը՝ ներկայացված գնային առաջարկը գնման գինը գերազանցելու պատճառով:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ ընթացակարգը հայտարարել չկայացած:

Հայտարարել նոր գնման ընթացակարգ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2024/66/1» ծածկագրով:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

*Հանձնաժողովի*

*նախագահ՝* ____________ *Հ. Առոյան*

*անդամներ՝* ____________ *Ռ. Դխոյան*

____________ *Լ. Սարատիկյան*

*քարտուղար՝* ____________ *Ա. Գալուստյան*